

# Ժողովուրդ

135  
(2615)

24 սեպտեմբերի շաբաթ 2022  
տպագրության ԺԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com


100 դրամ

## ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 98



«Եթե Ադրբեջանը ճանաչի Հայաստանի տարածքային ամբողջականությունը, ոչ թե տեսականորեն, այլ կոնկրետ, ես նկատի ունեմ մեր միջազգայնորեն ճանաչված 29.800 քառակուսի կիլոմետր տարածքի ամբողջականությունը, կնշանակի, որ մենք կարող ենք խաղաղության պայմանագիր կնքել՝ փոխադարձաբար ճանաչելով միմյանց տարածքային ամբողջականությունը»։ Երեկ Նյու Յորք կատարած աշխատանքային այցի շրջանակում վարչապետ Նիկոլ Փաշինյանը նման հայտարարություն էր արել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի իր ելույթի ժամանակ: 334 մամուլի խոսակ էդուարդ Շարմազանովն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ, փաստացի, Նիկոլ Փաշինյանը հրաժարվում է Արցախից եւ անկլավներից, որոնց վերաբերյալ նախկինում այլ հայտարարություններ են եղել: «Անկլավներն էլ են դրանց մեջ մտնում: Էն որ՝ «հորս արեւ, մորս արեւ» երդումներ էին ուտում, «քֆուրներ» էին ուտում, որ Քյարքիի հարց չկա, Տավուշի մարզի հարց չկա. բա 29.8-ի մեջ Տավուշի անկլավները չեն մտնում: Չի մտնում նաեւ Տիգրանաշենը, տալիս է ու ինքն է առաջարկում, ասելով՝ ինձ 29.8 տվեք, հերիք է», - նշեց նա: Հիշեցնենք, որ անկլավների մասին վերջին շրջանում ԶԳ-ականների կողմից բազմաբնույթ հայտարարություններ են եղել: Օրինակ՝ 2021 թվականի դեկտեմբերի 25-ին Նիկոլ Փաշինյանը լրագրողների հարցերին պատասխանելիս նշում էր. «Շատ է խոսվել անկլավների մասին, եւ մինչեւ այս պահը, ինչքան ուսումնասիրել ենք, անկլավների գոյության իրավական հիմք չենք գտել: Այդ հարցերը դեմարկացիայի եւ դեիմիտացիայի պրոցեսում պետք է քննարկենք»: Փաստորեն հիմա ստացվում է՝ առանց իրավական հիմքերը ստուգելու Փաշինյանը խնդրում է ճանաչել գոնե 29.800 քառակուսի կիլոմետր տարածքը: Այսինքն՝ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Ի շխանական պատգամավորներին հրահանգ է իջեցվել որեւէ կերպ չմեկնաբանել «Եռաբլուր» զինվորական պանթեոնում տեղի ունեցած խայտառակ միջադեպը, երբ Ոստիկանության կարմիր ու սեւ բերետավորները, հանուն Նիկոլ Փաշինյանի անվտանգության, բառից բուն իմաստով քարշ տալով բերման ենթարկեցին զոհված զինծառայողների մայրերին, հայրերին, քույրերին: Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը երկու օր շարունակ փորձում էր լսել Ազգային ժողովի մեծամասնության՝ ԶԳ-ականների տեսակետը: Լիաժույս էինք, որ ժողովրդավարության մասին գործիքներ դիֆերամներ ձևող իշխանավորները խստագույն կդատապարտեն տեղի ունեցածը, այնինչ, նրանց հետ զրուցել այդպես էլ չստացվեց. նրանք թե՛ մեր զանգերը, թե՛ հաղորդագրություններն անպատասխան թողեցին: Ավելին՝ պատգամավորներից մեկն էլ՝ Ծովինար Վարդանյանը, ո՛չ ավել, ո՛չ պակաս, հորդորեց իր հետ շփվելու պատվին արժանակալու համար՝ դիմել խմբակցության քարտուղար Արթուր Զովինանիսյանին: «Մեր խմբակցության հարցազրույցները կորոզիվեցին և խմբակցության քարտուղար Արթուր Զովինանիսյանը: Խնդրում եմ մինչ ինձ հետ հարցազրույց ունենալը՝ դիմել նրան», - ասաց տիկին Վարդանյանը: Իշխող թիմի պատգամավորները, որ ըստ օրենքի ու կանոնակարգի՝ ազատ են իրենց խոցի, մտքի ու համոզմունքների մեջ, փաստորեն սոսկալի կաշկանդվածություն ունեն խմբակցության քարտուղարից: Իհարկե, պարզից էլ պարզ է, որ վերոնշյալ թեմայով խոսելու արգելք կա կառավարական կաբինետից, բայցեւ հետաքրքիր է՝ ծիծաղելի այս պատասխանը պատգամավորները Հանրային հեռուստաընկերությանն էլ են տալիս:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղված գործառնությունից ուղրտը համակարգող տեղակալ Սրբուհի Գալստյանը եւս պաշտոնից ազատման դիմում կգրի: Ըստ դատախազությունում տարածված լուրերի՝ նրան նշանակելու են ՊԵԿ նախագահի տեղակալ Շուշնիկ Ներսիսյանի պաշտոնում: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց անձամբ Սրբուհի Գալստյանից պարզել տեղեկությունը, ինչին ի պատասխան նա հայտնեց, թե. «Նման բան չկա»: Հիշեցնենք, որ Աննա վարդապետյանի՝ լիազորությունները ստանձնելուց հետո համակարգում մեկը մյուսի հետեւից ազատման դիմումներ են գրում: Երեկ էլ ազատման դիմում էր ներկայացրել Գլխավոր դատախազի տեղակալներից Արմեն Աֆանյանը, ում հնարավոր ազատման մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր դեռ ամիսներ առաջ: Նկատենք՝ ուղրտի մարդիկ ավելի շատ չեն ցանկանում աշխատել Վարդապետյանի հետ եւ այդ պատճառով են հեռանում, ինչպես նաեւ ազատման դիմումներ են գրում հենց նախկին դատախազ Արթուր Դավթյանի կարգերը:



Սալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի՝ թիվ 81 մանկապարտեզի նորոգման աշխատանքներն արդեն մեկ տարի է, ինչ ընթանում են: Իսկ մանկապարտեզի համար հերթագրված երեխաները մնացել են բախտի քմահաճույքին: Չնայած այն հանգամանքին, որ հերթագրված սաների ծնողներին խոստացել էին, որ այն բացվելու է սեպտեմբերին: Բայց այն սեպտեմբերին չի բացվել, որից հետո ծնողներին ասել են, որ մանկապարտեզը շահագործման կհանձնվի նոյեմբերին: Հետո դարձյալ ժամկետներ են փոփոխվել եւ ծնողներին լուրեր են հասել այն մասին, որ մանկապարտեզը կբացվի հաջորդ տարի՝ գարնանը: «Անեցին սեպտեմբեր, հետո փոխեցին նոյեմբեր, ստիպված երեխային տարել ենք մասնավոր մանկապարտեզ. ամսական վճարում ենք 70-80 հազար դրամ գումար, որ գոնե մեր աշխատանքը կարողանանք պահենք: Հակառակ դեպքում պետք է գործազուրկ դառնանք ու տանը նստենք», - «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում վրդովված նկատեց ծնողներից մեկը: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Երեւանի քաղաքապետարան եւ խնդրեց տեղեկացնել, թե ինչն է մանկապարտեզի բացման ձգձգման պատճառը: Մեր հարցին ի պատասխան՝ քաղաքապետարանից փոխանցեցին, որ մինչ այս որոշ ժամանակով շինաշխատանքները դադարեցվել են, քանի որ մանկապարտեզի կառուցման մի մասը ՄԱԿ-ի ծրագրով է ֆինանսավորվում եւ դրա հետ կյապված խնդիրներ են առաջացել, հետո լուծվել են: Այսպես Նշեցին, որ մանկապարտեզի բացումը մեծ հավանականությամբ մինչեւ գարուն չի հասնի, այլ՝ առաջիկա ամիսներին կավարտվեն շինաշխատանքները: Բայց հակառակ պատկերն արձանագրեցինք հենց մանկապարտեզի բակում, երբ այցելեցինք այնտեղ: Շինաշխատանքները դեկավարող Գեորգ Խոստիկյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտարարեց, որ մանկապարտեզը, հնարավոր է, բացվի հաջորդ տարվա գարնանը. «ըստ ժամանակացույցի՝ նոյեմբերի վերջին ավարտվում է շինարարությունը, բայց ժամանակացույցը կերկարեցնենք, որովհետեւ ունենք դրսի կյուրուլու խնդիր, բացի այդ, նախագծով շենքի արտաքին տեսքի հետ կապված փոփոխություններ պետք է արվեն»: Փաստորեն, Երեւանում հնարավոր է մի քանի ամսում բարձրահարկ շինություններ կանգնեցնել, իսկ երկհարկանի մանկապարտեզի շինարարությունն արդեն մեկ տարի է, ինչ չի ավարտվում: Իսկ ամենամտահոգիչն այն է, որ քաղաքապետարանն է անտեղյակ:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՆԹՈՒՐՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՄԵՆՔ ՕՐ ՕՐԻ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆՔ»

Սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ սկսված չհրահրված և չարարացված ռազմական ագրեսիայի հետևանքով, ինչի ժամանակ հակառակորդը կիրառել է ծանր հրետանի, համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր և մարտական անօդաչու թռչող սարքեր, քիմիատարրով են 36 բնակելի տներում և համայնք, այդ թվում՝ Գորիսը, Ջերմուկը, Վարդենիսը, Կառլան, Գեղամասարը, ադրբեջանական հարձակումը միջուկային քիմիատարրով են խաղաղ բնակչությանը և կենսական նշանակության բաղաճանկի համայնքները: Հայաստանի Գեղարհունիքի, Վայոց Ձորի և Մյունիքի մարզերից ժամանակավոր տեղահանվածների ընդհանուր թիվը կազմում է ավելի քան 7600 մարդ, հիմնականում կանայք և սարեցներ, որոնցից 1437 երեխա և 99 հաճախորդներ ունեցող անձ: Ագրեսիայի հետևանքով զոհերի և անհետ կորածների թիվն այս դրանից գերազանցում է 207-ը, զոհերից 3-ը և անհետ կորածներից 2-ը խաղաղ բնակիչ են: Վիրավորվել են 293 զինծառայող և 8 խաղաղ բնակիչ, առնվազն 20 զինծառայող գերեզմաններով: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը գրուցել է ազատամարտի, ռազմական փորձագետ Արթուր Եղիազարյանի հետ:



խատանքներ են տանում, ամրանում են: Իսկ դա նշանակում է, որ չեն պատրաստվում հեռանալ, ու, բնականաբար, հաջորդ պահին փորձելու են իրենց համար նպատակավոր ընկալելու ծեղծ բերել: Խնդիրը պետք է ընկալել ավելի խորքային մակարդակով: Ադրբեջանի ու Թուրքիայի համար կարևորը Հայաստանի չզոյությունն է: Ու եթե ինչ-որ մեկը կարծում է, որ ադրբեջանցիները որոշ չափով առաջ կգան ու դրանով կբարարավեն կամ դադար կառնեն, ապա չարաչար սխալվում է: Բարենպաստ ամեն պահ օգտագործելու են ու փորձեն մխրձվել Հայաստանի տարածքում, որովհետև, կրկնում են, նրանց վերջնականապես առհասարակ Հայաստանի չզոյությունն է: Այսօր թե՛ ադրբեջանցիները, թե՛ թուրքերն առաջ-նորդվում են պանթուրքական ծրագրով, որ գիտենք՝ մեկ դարից ավելի իրենց հիմնական երազանքն ու նպատակն է: Այդ վերջնականապես թուրքալուծող պետությունների միավորում ձեռնարկել հասնելուն խանգարում է Հայաստանը, որ սեպի նման մխրձված է երկուսի արանքում: Թե՛ Թուրքիան, թե՛ Ադրբեջանը շատ լավ գիտեն, որ իրենց երկրների զգալի մասը պատմական հայկական հողեր են, հայերի տարածքներն են, ու որ իրենք այժմ ապրում են գոյություն ունեցող ժողովրդի հայրենիքով:

հետևաբար՝ քանի այդ ժողովուրդը՝ մենք, կանք տարածաշրջանում, ապա, իրենց չափումներով ու ըկալումներով, միշտ ենք վտանգ ներկայացնելու: Եթե ուշադրություն դարձնենք, ապա կարճաժամանակյա թուրքական գործերը, երբ Միջագետքում ու Սիրիայում գործողություններ էին իրականացնում, առաջնահերթ թիրախավորում էին հենց այն բնակավայրերը կամ թաղամասերը, որտեղ հայությունն էր բնակվում: Այսինքն՝ իրենք ոչ միայն հայկական լեռնաշխարհը, այլ դրա շրջակայքն են ցանկանում ազատել հայերից:

**Փաստորեն, ադրբեջանցիների չափումներով՝ «խաղաղության պայմանագիր» կլինի միայն այն ժամանակ, երբ Հայաստանն առհասարակ գոյությունն չունենա:**

-Միանշանակ՝ այո: Ըստ մեր հարեալների՝ խաղաղություն կլինի այն ժամանակ, երբ տարածաշրջանում հայեր չեն լինի, իսկ դա կլինի «թուրքական խաղաղություն» կամ «միակողմանի խաղաղություն», բայց նման օրակարգ ուղղակի չի կարող գոյություն ունենալ: Տեսնում ենք, որ նրանք մի բան հայտարարում են, բոլորովին այլ բան ասում, ու այդ քաղաքականության հետևանքով մենք օր օրի մեր տարածքներն ենք կորցնում:

Ջրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐՈՒՊՅԱՆԸ

-Սեպտեմբերի 13-ից հետո ադրբեջանական զորքերը կարծես նորից կուտակվում են սահմանի երկայնքով, ու հասարակության ներսում թափառող նոր տազնապ, անհանգստություն կա, որ ադրբեջանական զորքերը նոր հարձակման են նախապատրաստվում: Այս մասով ո՞րն է ձեր վերլուծությունը:

-Ադրբեջանական զորքերի նոր կուտակում չկա, ուղղակի կա ադրբեջանական զորքերի առաջընթաց ու տեղակայում: Այսինքն՝ նրանք ոչ միայն Հայաստանի տարածքում առաջ են եկել, այլ նաև ապօրինի կերպով սահմանների կահավորման աշ-

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է.

«Գեղարքունիքի, թերեւս սահմանապահ դարձած Կուտակյան համայնքի բնակիչներից երեկ ստացա ահազանգ. թշնամին հրաձգային զինատեսակներից կրակ է բացել տեղի հայկական դիրքերի ուղղությամբ, իսկ Կուտակյան համայնքի բնակիչները գտնվում են ադրբեջանցիների տեսադաշտում:

Այդ պահին ընթանում էր փոխհրաձգություն, զոհերի, վիրավորների մասին տեղեկություն առկա չէր, մինչ ավելի ուշ այս մասին հայտնեց ՀՀ ՊՆ-ն՝ սեպտեմբերի 23-ին՝ ժամը 07:40-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈւ ստորաբաժանումները կրկին խախտել են հրադադարի ռեժիմը՝ տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ բացելով հայ-ադրբեջանական սահմանի արեւելյան ուղղությամբ տեղակայված հայկական մարտական դիրքերի ուղղությամբ:

Պատասխան գործողություններով հակառակորդի կրակը լռեցվել է: Հայկական կողմում կորուստներ չկան:

ArmLur-ը նաեւ գրուցել է սահմանաւերժ գյուղերի համայնքապետերի հետ՝

հասկանալու համար ինչ իրավիճակ է այնտեղ: «Ներքին Հանդում որեւէ լարվածություն չկա, ամեն ինչ նորմալ է»: Սահմանի լարված իրադրության մասին ArmLur.am-ին ասաց Ներքին Հանդի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանը:

«Ոգին մարտական է, միայն անորոշություն է», -հավելեց նա:

«Սոթքում այս պահին ամեն ինչ նորմալ է: Հակառակորդը որեւէ սարքանք չի դեմել»: Այս մասին ArmLur.am-ին ասաց Սոթքի վարչական ղեկավար Սեւակ Խաչատրյանը:

ՇԱՐՄԱԳՐԳԻՌ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սեպտեմբերի 22-ին հրավերով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել հանդիպում մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության նախագահներ Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի եւ Լեւոնյանի Ղարաբաղի Հանրապետության նախագահներ Արկարի Ղուկասյանի եւ Բակո Սահակյանի: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Հայաստանում ստեղծված իրավիճակի առնչությամբ տեղի է ունեցել շահագրգիռ քննարկում: Որոշում է ընդուն-

վել շարունակել հանդիպումները: Նկատենք՝ Հայաստանի համար պատմական եւ ճակատագրական այս փուլում ՀՀ եւ Արցախի նախկին նախագահները հավաքվեցին Վեհարանում՝ Կաթողիկոսի շուրջ, որպեսզի քննարկեն մեր երկրի առջեւ ծառայած մարտահրավերները: Հասկանալի է, որ քննարկումը ծանր է եղել, քննարկման սեղանին եղել են մեծ թվով հարցեր եւ հասկանալի է, որ դրանց շուրջ ընդհանուր հայտարարի դժվար է հասնել միանգամից եւ բոլորովին հաշվի առնելով նրանց տեսակետների, մոտեցումների եւ պատկերացումների տարբերությունը: Ամեն դեպքում այս հանդիպումը պետք է քննարկել ոչ թե բովանդակային իմաստով, թե ինչ է քննարկվել կամ որոշվել, այլ ձեռք, քանի որ ՀՀ եւ Արցախի նախկին իշխանությունները կարողացել են հավաքվել մեկ սեղանի շուրջ՝ Կաթողիկոսի կազմակերպմամբ: Այս հանդիպման կարեւորությունը թերեւս սա է եւ ինչպես ասվում է պաշտոնական հաղորդագրության մեջ, նման հանդիպումները շարունակական բնույթ է կրելու, ինչը եւս կարեւոր է եւ կարող է արդյունքի հասցնել: Սակայն այս փուլում սպասել, որ հանդիպումը միանգամից արդյունք է տալու, քաղաքական միատեսակություն է, քանի որ այդպիսի արդյունք չի կարող ապահովել քաղաքական տարբեր, սուր հայացքներ ունեցող գործիչների միավորումից:

ԸՆԿԵԼ Է ՀԵՐՈՍԻ ՄԱՐՈՎ

Ապարանի համայնքապետարանը հայտնում է, որ սեպտեմբերի 13-ի մարտերի ժամանակ հերոսի մահով ընկել է մայր Գեղամ Գեղամյանը: «Զինվորական փառապանծ ճանապարհ անցած սիրված հրամանատարի անունը միշտ վառ կմնա մեր սրտերում», - ասված է համայնքապետարանի Facebook-ի պաշտոնական էջում:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գեղամյանը Ջերմուկում է զոհվել: Մեզ հասած տեղեկություններով՝ նա 44-օրյա պատերազմից հետո՝ Նոյեմբերին, մեղադրվում էր մարտական ծառայության կանոնները խախտելու մեջ:

Ըստ գլխավոր դատախազության՝ Գեղամ Գեղամյանը չէր ապահովել հերթապահությունում ընդգրկված ուժերին առաջադրված մարտական խնդիրները, մասնավորապես՝ արդյունավետ չէր դիմադրել դիրքերին մոտեցող ադրբեջանցի զինվորականներին. նա եւս 7 զինծառայողի հետ դիմել էր փախուստի, հենակետում գտնվող 11 զինծառայող գերեզմարդ էր:

Քրեական գործը թեւեւ չէր կարճվել, ու զինվորականի դատավարությունը շարունակվում էր, բայց նրա խափանման միջոցը փոխվել էր, ու Գեղամյանը շարունակում էր ծառայությունը:

Այսօր փաստորեն, տեղեկանում ենք, որ զոհվածների թվում է նաեւ տարբեր հանցանքների մեջ մեղադրվող զինվորականը, որ հանուն հայրենիքի կյանքը չի խնայել ու զոհվել է հայրենիքի սահմանները պաշտպանելիս: Սա թերեւս պետության՝ սպաների նկատմամբ ունեցած ոչ միանշանակ վերաբերմունքի մասին է խոսում, թե ինչպես կարող էր փախուստի մեջ մեղադրվող նորից ծառայության անցնել ու չխնայել կյանքը:

ԿԱՐՃ ԵՓՈՒՄ

Առանձին հանդիպում չի եղել, երկու երկրերի փոխվարչապետերը մասնակցել են ԱՊՀ տնտեսական խորհրդի նիստին, որի շրջանակներում կարճ ժամանակում են ունեցել վերջին շրջանի էսկալացիայի վերաբերյալ: Այս մասին ArmLur.am-ին հայտնեցին Միեր Գրիգորյանի գրասենյակից՝ պատասխանելով մեր՝ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի ու Ադրբեջանի փոխվարչապետ Յագուբ Էյուբովի հանդիպման մասին հարցին:

Ոչ պաշտոնական զրույցի հիմնական թեման սահմանային վերջին լարվածությունն է եղել:

Մոսկվայում ոչ պաշտոնական մթնոլորտում, հանդիպել են Հայաստանի փոխվարչապետ Միեր Գրիգորյանն ու Ադրբեջանի փոխվարչապետ Յագուբ Էյուբովը:

Հավելենք, որ Հայաստանի փոխվարչապետ Միեր Գրիգորյանն ու Ադրբեջանի փոխվարչապետ Յագուբ Էյուբովը Մոսկվայում մասնակցում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Անկախ պետությունների համագործակցության տնտեսական խորհրդի հերթական նիստերին:

Փոխվարչապետերի հանդիպումն ու զրույցը կայացել է խորհրդի նեղ կազմով նիստից հետո՝ ընդմիջմանը: Այնուհետեւ փոխվարչապետերը մասնակցել են ԱՊՀ տնտեսական խորհրդի ընդլայնված կազմով նիստին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՓԱՇԽՆՅԱՆԻ ԵՆՈՒՅԹԸ

ՀԱՍՑԵԱԿԱՆ ՈՒ ԼԻԱՐԺԵՔ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԱՉՔՈՎ

«Եռաբլուր» գինվորական պանթեոնում գոհված գինծառայողներից մեկի մոր մատն է կտորվել, մյուսի՝ ձեռքը վնասվել. սա ցավոք հատված է ոչ թե հայկական, այլ արդեն ադրբեջանական լրատվամիջոցների պատրաստած ռեպորտաժի: Հակառակորդի աչքից, որ ուշի ուշով հետևում է Հայաստանում ու Արցախում կատարվող իրադարձություններին, չի վրիպել նաև ոստիկանների «ծեփենք պատերին», «փռենք ասֆալտին» անմարդկային օպերացիան: Անգամ ադրբեջանցիներն են գարմա-նում, որ Ջերմուկում կամ Վարդենիսում կռվելու փոխարեն՝ սեւ ու կարմիր բերետավորները «Եռաբլուրում» գոհվածների մայրերին ու քույրերին են քարոջ տալիս, բերման ենթարկում: Մեր հարեանները տեղի ունեցածը որպես խայտառակություն են որակում: Օրվա իշխանությունները, որ ընդհանրորեն մեղադրում էին պետության, պաշտպանության ևախարարության մասին հարցեր բարձրաձայնելու միջոցով թշնամու ջրադացին ջուր լցնելու մեջ, այս դեպքից հետո ձկան պես լուռ են: Դեռևս 2021 թվականի մայիսի 3-ին այն ամանակ դեռ անկախ պատգամավոր Թագուհի Թովմասյանը սահմանների անվտանգության մասին վարչապետ Փաշինյանին հարց էր ուղղում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, սակայն, սփոփող պատասխանի փոխարեն՝ հոխորտում էր, թե՛ բավ է հակառակորդին հուշեք մեր բնագծերի տեղը: Ավելին՝ Փաշինյանն ինքնավտահայտարարում էր, թե կախվածություն է առաջնագիծը, պարզապես մենք՝ քաղաքացիներս, չենք տեսնում դա: Այդ հայտարարությունից ընդամենը 9 օր անց ադրբեջանական զորքը մտավ Հայաստանի սուվերեն տարածք: Իսկ արդեն տասն օր առաջ՝ 2022-ի սեպտեմբերի 13-ին, լայնամասշտաբ հարձակում սկսեց Փաշինյանի ասած «կախված» դիրքերի վրա: Ընդդիմությանը հակառակորդին հուշումներ տալու մեջ մեղադրող իշխանականներին հորդորում ենք ամեն օր նայել «Եռաբլուրի» խայտառակությունն ու դրա մասին ադրբեջանական լրատվամիջոցների պատրաստած ռեպորտաժները, խորը շունչ քաշել, մի բաժակ սառը ջուր խմել ու լիքը բերանով կործանել, թե ասպագա կա:

ՄԵՂԱԳԻՐԱՆՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հրանուշ Մարանջյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա որպես իր երեխայի՝ Էռնեստ Սամվելի Նազարյանի հետ բնակվող ծնող, 1 ամսվա ընթացքում երեք անգամ՝ 14.09.2021թ., 16.09.2021թ., 23.09.2021թ. առանց հարգելի պատճառների խոչընդոտել է 2021թ. հուլիսի 13-ին ՇՄ ՈԻԴ թիվ ՇՂ/2958/02/19 կատարողական թերթի հիման վրա սահմանված տեսակապով տեսակցության իրականացմանը, Էռնեստ Նազարյանի եւ վերջինիս հետ ջնակվող ծնող՝ Սամվել Վարդանի Նազարյանի միջեւ, որի վերաբերյալ ՀՀ ՂԱՀԿ ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթի ընթացքում վերջինիս կողմից ներկայացվել է տեսակցության իրականացմանը ծոչընդոտելու մասին հայտարարություններ: Այսպիսով Հ. Մարանջյանին մեղադրվում է 01.07.2022թ. ուժի մեջ մտած ՀՀ քր օր-ի 243 հոդվ 1-ին մասով նախատեսված՝ հանրության համար վտանգավոր արարքի մեղավորությամբ կատարումը:

**Վարչապետ Նիկոլ Փաշինյանը միջազգային համայնքին հորդորում է հասցեական ու լիարժեք աջակցություն սրամարդեղ Հայաստանին: Երեկ ՄԱԿ-ի ամբիոնից այս մասին զգուցանեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ հորդորելով միջազգային համայնքին հասցեական ու լիարժեք աջակցություն սրամարդեղ: Բաան բողեանոց ելույթում Հայաստանի վարչապետը խոսեց հիմնականում Ադրբեջանի հեռաբերություններից, դնդեղով, թե Բաբուն մտադիր է Հայաստանից նորանոր սարածներ գրավել:**

«Ես պաշտոնական եւ հրապարակային հարց եմ ուղղում Ադրբեջանի նախագահին՝ կարո՞ղ ես ցույց տալ Հայաստանի այն քարտեզը, որը ճանաչում ես, կամ պատրաստ ես ճանաչել որպես Հայաստանի Հանրապետություն: Ինչու եմ սա հարցնում. որովհետեւ կարող է պարզվել, որ ըստ Ադրբեջանի պաշտոնական տեսանկյունի, Հայաստանի միայն կեսը, կամ դրանից էլ քիչն է Հայաստանի Հանրապետություն», - հայտարարեց Փաշինյանը:

Խոսելով խաղաղության պայմանագրից՝ Նիկոլ Փաշինյանը կրկին հայտարարեց՝ պատրաստ է ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, եթե Բաբուն էլ ճանաչի Հայաստանին՝ միջազգայնորեն ընդունված սահմաններում: Օրեր առաջ այս հայտարարությունը Փաշինյանը հնչեցրել էր Հայաստանի խորհրդարանում, երեկ նույնը կրկնեց արդեն միջազգային լսարանի առաջ:

«Եթե Ադրբեջանը ճանաչի Հայաստանի տարածքային ամբողջականությունը՝ ոչ թե տեսականորեն, այլ՝ գործնականում, նկատի ունեմ մեր՝ միջազգայնորեն ճանաչված 29 հազար 800 քառակուսի կիլոմետրի ամբողջականությունը, նշանակում է՝ մենք կարող ենք ստորագրել խաղաղության համաձայնագիր», - ասաց վարչապետը:

Ելույթ ունենալով միջազգային ամբիոնից՝ Փաշինյանը ոչ միայն Ադրբեջանին, այլև դաշնակիցներին քննադատեց՝ առանց անուններ հնչեցնելու: Մի դեպքում ասաց՝ իրավիճակը կարող է սրվել, քանի որ անվտանգության տարածաշրջանային կազմակերպությունները պատշաճ չեն արձագանքում: Մեկ այլ դեպքում էլ մանրամասներ բացահայտեց դնդեղով բանակցություններից ու անցած տարվա բախումներից:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ ԼՐԱՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԿԱՐԵՑՎԵԼ ԵՆ

Բարձրագույն դատական խորհուրդը սեպտեմբերի 22-ին որոշում է ընդունել, որի համաձայն՝ հիմք ընդունելով Ալեքսանդր Ազարյանի դիմումը, նրա՝ Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցվել են:

Որոշման մեջ ասվում է. «Հիմք ընդունելով Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ալեքսանդր Ռոբերտի Ազարյանի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 19-ին ստացված հրաժարականի վերաբերյալ դիմումը եւ դեկլարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով (ԲԴԽ-ն արձանագրում է դատավորի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող հանգամանքի առկայությունը), 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (դատավորի լիազորությունները դադարում են, եթե՝ նա հրաժարական է ներկայացնում) եւ 2-րդ մասով, 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է 1. 2022 թվականի սեպտեմբերի 22-ից Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ալեքսանդր Ռոբերտի Ազարյանի լիազորությունները համարել դադարած»:



«Անցյալ տարի Ադրբեջանն օկուպացրել էր Հայաստանի ավելի քան 40 քառակուսի կիլոմետր տարածք: Դրանից հետո, Ադրբեջանի արդարացումներից մեկն այն էր, որ Հայաստանը, ըստ նրանց, հրաժարվում է սահմանազատման հանձնաժողով ստեղծելուց: Մենք, իհարկե, չէինք հրաժարվել դրանից, այլ միայն պնդել էինք, որ միաժամանակ սահմանների անվտանգության մեխանիզմ ստեղծվի: Ի վերջո, մեր միջազգային գործընկերների խնդրանքով, որոնք պնդում էին, որ սահմանային հանձնաժողովի աշխատանքն ինչ-ինչ վստահելի գործոն է լինելու սահմանների անվտանգության համար, պայմանավորվեցինք սկսել աշխատանքները: Եվ հիմա, երբ ձեռավորվել է աշխատում է սահմանների սահմանազատման եւ անվտանգության հանձնաժողովը, Ադրբեջանը նախաձեռնեց ագրեսիայի նոր փուլ: Իսկ այդ միջազգային գործընկերներից ոմանք լռում են», - ընդգծեց Հայաստանի վարչապետը:

Խոսելով ագրեսիայի պատճառներից՝ Փաշինյանը նաև հաղորդակցության ուղիների բացումը հիշատակեց, կրկին պնդելով, որ Ադրբեջանը Հայաստանից արտատարածքային ճանապարհ է ուզում, մինչդեռ եռակողմ փաստաթղթերում այդ մասին որեւէ խոսք չկա:

Թեւեւ մինչեւ 44-օրյա պատերազմը Հայաստանի վարչապետը ՄԱԿ-ի վեհաժողովում հայտարարում էր, թե Ղարաբաղի ժողովուրդը պետք է կարողանա առանց սահմանափակման որոշել իր կարգավիճակը, այս անգամ ինքնորոշմանը որեւէ կերպ չսանդղարձավ: Հորդորեց միջազգային համայնքին աջակցել, որպեսզի ՄԱԿ-ի արդարափրական առաքելությունները կարողանան անարգել Ղարաբաղ մտնել՝ տեղում հումանիտար իրավիճակն ու մարդու իրավունքները գնահատելու, մշակութային ժառանգության պաշտպանությունը երաշխավորելու համար:

Հայաստանի վարչապետը նշեց՝ հայադրբեջանական սահմանին միջազգային դիտորդական առաքելությունը կարող է նպաստել տարածաշրջանի անվտանգությանը: Առաջին անգամ այդ մասին Փաշինյանը խոսել էր անցած տարվա մայիսին. երբ ադրբեջանական բանակը հատել էր Հայաստանի սահմանը Սյունիքի ու Գեղարքունիքի հատվածներում, պաշտոնական երեսան առաջարկել էր Սոթք-Խոզ-Նավար հատվածում միջազգային դիտորդներ տեղակայել: Թե անցած մեկուկես տարում կոնկրետ որ կառուցվի կամ երկրին է դիմել Հայաստանի իշխանությունն այս հարցով, ինչ պատասխան է ստացել, եւ ինչ քայլեր է մտադիր ձեռնարկել հիմա, պաշտոնական աղբյուրները չեն հստակեցրել:

ՆԱԻՐԱ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՆՈՐ ՏԵՂԱԿԱԼ

Երեւանի ավագանու սեպտեմբերի 23-ի արտահերթ նիստում Երեւան քաղաքի ավագանին Տիգրան Ավինյանին նշանակեց Երեւանի քաղաքապետի տեղակալի պաշտոնում:

Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանն ասաց, որ Տիգրան Ավինյանը, միաժամանակ, փորձառությունը, որ ունեցել է պետական ապարատում աշխատելու ընթացքում, հնարավորություն կունենա կիրառել Երեւանում:

Տիգրան Ավինյանի իր ելույթում նշեց, որ յուրաքանչյուր պաշտոն կամ կարգավիճակ ընդամենը իրիցք է նպատակների, գաղափարների իրականացման եւ խնդիրների լուծման համար:

ԳԼԽԱՎՈՐ ԲԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Արամ Նիկոյանը նշանակվել է Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղար:

Համապատասխան որոշման մեջ ասվում է. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ եւ 151-րդ կետերը:



ՊԱՐՏԱԴՐԵԼ

ԳԻՄԵԼ ԵՆ ԵԽ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հայ իրավապաշտպանները դիմել են Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ղեկավարությանը՝ պահանջելով դադարեցնել Ադրբեջանին կասարել Եվրոպական դատարանի 2020-21 թվականներին կայացված վճիռները: Գրանց վերաբերում են Մամիկոն Մարիբեկյանի, Գուրգեն Մարգարյանի, Կարեն Պետրոսյանի, Մամիկոն Խոջոյանի եւ Լաւրի Խաչատրյանի իրավունքներին:



Արտակ Զեյնալյան (ՄԻԵԴ-ում գերինտերի շահերի ներկայացուցիչ) - Պետությունը պարտավոր է վերականգնել մինչեւ իրավունքի խախտումը եղած դրությունը: Պետք է պատշաճ եւ ջանադիր հետաքննություն, նախաքննություն իրականացնել, բացահայտի մեղավորներին եւ նրանց ենթարկի պատասխանատվության:

Ադրբեջանը չի շտապում իրականացնել միջազգային պարտավորությունը, այս գործերով տրամադրել նաեւ արդարացի փոխհատուցում: Ադրբեջանում խոշտանակվել, ապա սպանվել էին գերության մեջ հայտնված Մանվել Սարիբեկյանն ու Կարեն Պետրոսյանը, անմարդկային վերաբերմունք էին դրսևորել նաեւ Մամիկոն Խոջոյանի նկատմամբ, որը հայկական կողմին փոխանցվելուց հետո մահացել էր: Ադրբեջանը չի կատարել նաեւ Բուդապեշտում Սաֆարովի կողմից դաժանորեն սպանված Գուրգեն Մարգարյանի եւ բլոգեր Ալեքսանդր Լապշինի գործով վճիռները:

Բլոգերը դիմել էր ՄԻԵԴ՝ իր նկատմամբ Բաքվի բանտում սպանության փորձ կատարելու եւ դաժան խոշտանգումներ իրականացնելու մեղադրանքով: Արտակ Զեյնալյան - Դիմել ենք նախարարների կոմիտեի, նշել ենք այս փաստերը, որ որտեղ բան չի արվում, պահանջում ենք, որ, նախ, կոմիտեն օգտագործի իր զեկները, գործիքները՝ Ադրբեջանին պարտադրելու համար, որ կատարի դատական ակտերը:

Ըստ Արտակ Զեյնալյանի՝ Ադրբեջանը պարտավոր է ներկայացնել գործողությունների պլան, որը պետք է քննարկման առարկա դառնա նախարարների կոմիտեում: Նախաքննության, դատաքննության գործընթացներին, ի դեպ, պետք է ներգրավված լինեն նաեւ տուժող կամ տուժողի իրավահաջորդները: Միջազգային հարցերով Հայաստանի ներկայացուցչի գրասենյակի ղեկավարը վստահեցնում է՝ այդ ուղղությամբ ինտենսիվ աշխատում են միջազգային գործընկերների հետ:

Լիպարիտ Դրմեյան (Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակի ղեկավար) - Հուսով եմ, որ մոտ օրերս համապատասխան արձագանք կունենանք այդ հարցի եւ մասնավորապես՝ Միևսայանի ու Մուկուչյանի ընդդեմ Ադրբեջանի գործի հետ կապված:

Արտակ Զեյնալյանը կարեւոր է համարում Եվրոպատարանի՝ Ադրբեջանի դեմ կայացված վճիռները: Դրանք, ըստ նրա, ազդեցություն են ունենում Ադրբեջանի վարքագծի վրա:

Արտակ Զեյնալյան - Սարիբեկյանի գործից սկսած մինչեւ Խոջոյան՝ այդ վարքագիծը փոխվում է: Նախ փորձ արվեց

հետքերը թաքցնելու նպատակով դին չտրամադրել, մինչեւ կքայքայվի եւ հնարավոր չլինի բացահայտել: Անմարդկային վերաբերմունքի մասով պնդումները Եվրոպատարանում հանգեցրին նրան, որ հիմա բուժօգնություն է ցուցաբերվում միևսայանի գինձառայողներին, տեսանյութ է նկարահանվում, դրվում է համացանց: Սա՝ Եվրոպական դատարանի ապագա վարույթի նյութերն իրենց կողմից որպես հակափաստարկ ներկայացնելու համար:

Ստորագրված նոր արձանագրությամբ Եվրոպայի նախարարների կոմիտեն հիմա կարող է կրկին դիմել Եվրոպատարանին՝ այդ իրավունքների խախտման դեպքերը՝ որպես շարունակական խախտում, եւ մեկ անգամ քննելու համար: Ի դեպ, այս միջոցն առաջինը կիրառվել է Ադրբեջանի նկատմամբ: Գործը նոր քննության չի հասել, չկարողանալով այս անգամ խուսափել պատասխանատվությունից՝ Ադրբեջանը ազատ է արձակել ադրբեջանցի քաղաքացիներին:

ԴԱՏԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԵԼ Է 100 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՎՆԱՄ

Գլխավոր դատախազության ղեկավար Եսայի Գրիգորյանը հայտարարել է, որ «Գույքի գնահատման եւ աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը 2021թ.-ին իրականացրել է Երևանի Ազատամարտիկների դրոշմա 82/2 ԵՊԿ-ի թիվ 1 շինություն հասցեում գտնվող ղեկավար սեփականություն հանդիսացող 1174.8 քմ մակերեսով շինության գնահատում, որի արժեքը նույն թվականի ապրիլի 8-ի գնահատման հավելվածում կազմել է 128 մլն 686 հազար դրամ:

Այն Կառավարության համապատասխան որոշման հիման վրա 2021թ.-ի օգոստոսի 17-ին կնքված պայմանագրով 128 մլն 686 հազար դրամով օտարվել է քաղաքացի Ա.Ա.-ին:

Մինչդեռ, Կառավարի կոմիտեի «e-cadastre.am» կայքում առկա տվյալների

համաձայն՝ «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի հիման վրա նշված անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 229 մլն 483 հազար 863 դրամ, այսինքն՝ շուրջ 2 անգամ ավել վաճառքի եւ գնահատման արժեքից:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ արձանագրված փաստերը վկայում են, որ ՊՈԱԿ-ի գնահատողի կողմից 2021թ.-ի ապրիլի 8-ին կազմված եւ նույն ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի կողմից հաստատված գնահատման հաշվետվությամբ՝ շուրջ 229,5 մլն դրամ արժեքով շինությունը գնահատվել է 128.6 մլն դրամ, որն էլ հիմք է ընդունվել նշված անշարժ գույքի օտարման համար: Արդյունքում, նշված գույքն օտարվել է 128.6 մլն դրամով կամ շուրջ 2 անգամ պակաս շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքից՝ պետությանը պատճառելով շուրջ 100 մլն դրամի առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝ առաջացնելով ծանր հետևանքներ:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրությամբ առկա են եղել պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու կամ ծառայողական պարտականությունները չկատարելու՝ շահախնդարական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, ծանր հետևանքներ առաջացնելու, ինչպես նաեւ պաշտոնական կեղծիք կատարելու հատկանիշներ, պետական շահերի պաշտպանության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, եւ 445-րդ հոդվածի 1-ին եւ 445-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

ԼՈՒՐԵՐ

ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԳԱՏԱԽԱԶ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գլխավոր դատախազությունը հայտարարել է, որ «Հիմք ընդունելով «Դատախազության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ՀՀ դատախազությունը հայտարարում է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազի թափուր պաշտոնի համարման համար մրցույթ (այսուհետ՝ մրցույթ)»:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ կարող է նշանակվել «Դատախազության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով եւ 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձը, ում մոտ առկա չեն «Դատախազության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները:

Մրցույթին մասնակցելու ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենք (հասցե՝ ք. Երեւան, Վազգեն Սարգսյան 5) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը:

Ի դեպ՝ գրել էինք, որ չի բացառվում, որ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Հայկ Գրիգորյանին նշանակեն, սակայն ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նա ՀՀ վարչապետի հետ խոսել է եւ հայտնել է, որ իրավապահ համակարգում է ցանկանում աշխատել, ասել է, թե կոնկրետ զինդատախազի նշանակման հարցը մնացել է օրից կախված:

ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՎԵՑ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ քիչ առաջ պաշտոնից ազատվեց ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Ադանյանը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազությունում որշալույսները արդեն խաղաղ չեն: Դատախազությունում որոշ պաշտոնյաներ տրամադրված էին հեռանալուն դեռ մինչեւ նոր դատախազի գալը: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ մինչ Աննա Վարդապետյանի գալը պաշտոնից ազատման դիմումներ կգրեն ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Հայկ Ալալյանը, ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանը: Ասել է թե՛ նրանք չեն սպասի, որ իրենց ազատեն, այլ իրենք առաջ կընկնեն եւ ազատման դիմում կգրեն: Գլխավոր դատախազի տեղակալներից Արմեն Աֆանդյանի հարցը մի քիչ այլ է. դատախազությունում վստահ են, որ Աննա Վարդապետյանը նրա հետ չի աշխատի, ուստի, այսպես, թե այնպես, նա եւս կազատվի պաշտոնից: Միակ տեղակալը, որ թերեւս կլնա դատախազությունում, Գեորգ Բաղդասարյանն է, որին պաշտոնից չեն ազատի: Բանն այն է, որ նա թե՛ դատախազ Դավթյանի ընկերն է, բայց նաեւ մարտի մեկի գործով մեղադրող դատախազներից մեկն է եւ ծառայություն է մատուցել քաղաքական իշխանությանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 40 դեպք:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՌԱՆՑ ԿՆԻՔԻ ԹՂԹԵՐ

Իշխանությունը՝ անսխառեպ միջոցներ է գործադրում, վարչական մեծ ռեսուրսներ է գործադրում, որպեսզի սեպտեմբերի 25-ին կայանալիք Բերդ համայնքի ավագանու համամասնական կարգով ընտրություններում հաղթի «Քաղաքացական պայմանագիր» կուսակցությունը: Բերդ խոշորացված համայնքից հայտնեցին, որ առաջիկա ընտրություններում «Քաղաքացական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածուների 58 հոգանոց ցուցակի առաջին համար, Բերդի միասնական սոցիալական ծառայությունների կենտրոնի տնօրեն Վահրամ Սուքիասյանը սոցիալապես անապահով բնակիչների հետ թաքուն հանդիպումներում իրեն ընտրելու համար խոստանում է մարդկանց վճարել պետական բյուջեից տրվող եռամսյա դրամական օգնությունների գումարներ:

Մտտ մեկ ամիս առաջ Բերդի գիկնոմ նշանակված Լեռնիկ Օհանյանը Բերդ համայնքի գյուղեր է ուղարկել առանց կնիքի եւ իր ստորագրության թղթեր՝ մոբիլագացիայի ենթակա անձանց ցուցակներ, որտեղ ընդգրկված են Բերդ խոշորացված համայնքի ղեկավար, ավագանու «Ջորավոր համայնք» դաշինքի ավագանիների թեկնածուների ցանկը գլխավորող Հարություն Մանուչարյանի կողմակիցների անուններ եւ հայտնել, որ սեպտեմբերի 25-ին կայանալիք ընտրություններում Հ. Մանուչարյանի գլխավորած «Ջորավոր համայնք» դաշինքին ընտրելու դեպքում ցուցակում նշվածները 3 ամսով կմոբիլագացվեն սահմանների պաշտպանությանը: Բերդ համայնքի խաղողագործները հայտնեցին, որ Երեւանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղի Պառավաքարի ենթաշրջանի պատասխանատու Արթուր Միրզոյանը, ում եղբայրը ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածու, Արծվաբերդի անտառատնտեսության անտառապետ Ժիրայր Միրզոյանն է, Բերդ համայնքի խաղողագործներին ասել է, որ կոնյակի գործարանի մասնաճյուղը չի ընդունի այն խաղողագործների խաղողը, ովքեր սեպտեմբերի 25-ին չեն ընտրել Վահրամ Սուքիասյանի գլխավորած, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածուների ցանկին:

Երեւանի կոնյակի գործարանի հաղորդակցության գծով մենեջեր Զարուհի Սարիբեկյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց, որ այդ լուրը իրականությունը չի համապատասխանում, որ Երեւանի կոնյակի գործարանը մշտապես առանձնահատուկ ուշադրություն է դարձրել սահմանամերձ այգիների խաղողի մթերման հարցին, ավելին, այս տարի ընկերությունը կմթերի վերոհիշյալ շրջանների ամբողջ բերքը, ինչի մասին խաղողագործների հետ համապատասխան պայմանագրերը կնքվել են դեռ ամիսներ առաջ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՅԱՆ  
Տավուշ

ՀԱՍԱՅՆՔՆԵՐ

ՎՆԱՄՆԵՐԻ ՓՈԽՂԱՏՈՒՑՄԱՆ ՂԱՐՑ

Հակառակորդի հրեակոծության հետևանքով սեպտեմբերի 13-ից 14-ը Սյունիքի մարզում վնասվել են բազմաթիվ բնակելի տներ: Բացի այս, վնասվել է Նորավան գյուղի գերեզմանոցը, Քարաշեն գյուղի մշակույթի տունը: ArmLur.am-ին մարզի բնակիչները փոխանցեցին, որ աղբեջանցիները առեւանգել են ավելի քան 6000 գլուխ ոչխար: Սյունիքի մարզի հեռավորագրված հեռախոսակապի կենտրոնում է սրվելու այն բնակիչներին, որոնց ունեցած մանր եղջերավորները գողացվել են: Մակայն մարզադեպարտմենտից մեզ փոխանցեցին, որ աշխատանքային խումբը գույքագրում է իրականացնում եւ դեռ ողբ է հավաքվել սվյակներ: Պարզվում է՝ մարզադեպարտմենտը ստացել է հեռախոսագրեր մանր այն մասին, որ բնակիչները սարեւում սեխնիկա են թողել: Տեղեկացնենք, որ Սյունիքի մարզին եւս հասկացվել է 50 մլն դրամ գումար՝ Աղբեջանի կողմից հրեակոծված բնակավայրերի սեղանահանված բնակիչներին դրամական օգնություն՝ առաջին անհրաժեշտության խնդիրները լուծելու նպատակով: Բայց նշված գումարը բավարար չէ, որովհետք մարդկանց կրած կորուստները փոխհատուցվեն:

Օրինակ, հայտնի է, որ մեկ գլուխ ոչխարի արժեքն այսօր կազմում է 40 հազար դրամ, իսկ աղբեջանցիների կողմից առեւանգված ոչխարների ընդհանուր արժեքը գերազանցում է 200 մլն դրամը: Էլ չենք խոսում այն մասին, որ մանր եղջերավոր կենդանիները կրանց եկամտի միակ աղբյուրն են: Եւ մարզի բնակիչները հույս են հայտնում, որ կառավարությունն առաջիկայում լիարժեք կփոխհատուցի իրենց կրած վնասները:

Բացի այս, նկատենք, որ Վերիշեն համայնքում վնասվել է 3 բնակելի տուն, մեկ բնակարանի ապակիներն են ջարդվել: Այլներում վնասվել է 1 բնակելի տուն, Քարաշենում հանդիսությունների սրահն է հրետակոծվել: Նորավանում քաղաքացու ավտոմեքենա է վնասվել: Իսկ Կա-



պակի բժշկական կենտրոնի երկու շտապ օգնության մեքենա է վնասվել Կապան-Ճակատեն ճանապարհին:

Գործադիրը նախատեսում է օգնություն տրամադրել ՀՀ Գեղարքունիքի, Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի՝ հրետակոծությունից տուժած բնակավայրերից տեղահանված բնակիչներին: ArmLur.am-ը տեղեկացավ, որ յուրաքանչյուր մարզին կհատկացվի 50 մլն դրամ գումար: Այսինքն՝ Աղբեջանի կողմից հրետակոծված բնակավայրերի տեղահանված բնակիչներին դրամական օգնություն կտրամադրվի՝ առաջին անհրաժեշտության խնդիրները լուծելու նպատակով: Խոսքը 6 համայնքի բնակիչների մասին է:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը ArmLur.am-ի հետ զրույցում ասաց, որ ոչ միայն լինելու է դրամական օգնություն, այլեւ՝ իրականացվելու են տուժած բնակիչների տների նորոգման, կառուցման ծրագրեր: Տեղեկացանք, որ այս պահին վնասների գնահատման, գույքագրման աշխատանքներ են իրականացվում: արդեն մի քանի օր է՝ մարզպետարանի, համայնքապետարանի համապատասխան աշխատակիցները տե-

ղում գնահատման աշխատանքներ են իրականացնում:

ArmLur.am-ի հարցին՝ հնարավոր է փոխհատուցման չափը փոփոխվի, մարզպետն արձագանքեց՝ նշելով՝ «Եկեք չտատապենք, գնահատման աշխատանքներ են իրականացվում: Իհարկե, կփոխվի, գնահատման աշխատանքներն ավարտելուց հետո կհասկանանք, թե մեզ ինչ չափի գումար է անհրաժեշտ: Այս պահի դրությամբ մեզ տրվել է այդ չափի գումար, որպեսզի տուժածներին կարողանանք որոշակի աջակցություն ցույց տալ»:

Ի դեպ, տեղեկացնենք, որ Սոթքի բնակիչների մի հատվածը, որոնց տները լուրջ վնասվել են եւ հնարավոր չէ այնտեղ ապրել, գիշերել են ավտոմեքենաներում: Մակայն մարզպետի խոսքով, այս պահի դրությամբ ավտոմեքենաներում գիշերող մարդիկ չկան: «Նման մարդիկ չկան, արդեն մեզանից աջակցություն են ստացել եւ ապրում են մարզպետարանի, համայնքապետարանի կողմից վարձու բնակարաններում: Գուցե առաջին օրը գիշերել են ավտոմեքենաներում, բայց հիմա չկան»:

ՆՅՈՒՆԷ ՀԱՍԱՐԱՉՈՒՄՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, մարդասիրական ոլորտում որպես աջակցող կառույց Կառավարությունը, ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ եւ համակարգմամբ՝ այս օրերին խիստ կարիքի վրա հիմնված մարդասիրական աջակցություն է տրամադրում Գեղարքունիքի, Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերի տուժած եւ ներքին տեղահանված բնակչությանը՝ սննդի, հագուստի, հիգիենիկ, առաջին անհրաժեշտության եւ անկողնային պարագաների, Առաջին օգնության պայուսակների տեսքով:

Առաջնային արձագանքին զուգահեռ ՀԿԻԸ-ն՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ միասին, իրականացնում է ռազմական հակամարտության հետեւանքով ներքին տեղահանվածների մարդասիրական կարիքների արագ գնահատում

համապատասխան արձագանքը շարունակելու համար:

ՀԿԻԸ-ն անընդհատ համալրում է Թեժ գծերով դիմող քաղաքացիների տվյալների բազան՝ այն փոխանցելով նաեւ ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Առաջնային կարիքի հաշվառման հարթակ:

ՀԿԻԸ հոգեբաններն առերես (Կենտրոնական կլինիկական գիմնոլոգիական հոսպիտալի տարածքում, Վարդենիսում, Մարտունիում), առցանց (հեռորես, Կոռնիձոր, Տեղ, Սոթք, Մեծ Մասրիկ) ու Թեժ գծի միջոցով (ՀՀ բոլոր մարզեր) հոգեբանական աջակցություն են տրամադրում վիրավոր ու զոհված զինծառայողների հարազատներին ու տեղահանված ընտանիքներին:

ՓՈԽԱՆՑՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ երեւի՝ սեպտեմբերի 23-

ին, Աղբեջանը Հայաստանին է հանձնել զոհված զինծառայողների մարմիններ: Այս մասին հայտնել է ՀՀ-ում ԿԻՄԿ պատվիրակության հաղորդակցման եւ կանխարգելման ծրագրի ղեկավար Զառա Ամատունին՝ հավելելով, որ չի կարող նշել, թե կոնկրետ քանի մարմին է փոխանցվել Հայաստանին: Ըստ աղբեջանական լրատվամիջոցների՝ խոսքը վեց մարմին մասին է:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին Աղբեջանի գիւնուժի լայնածավալ հարձակման հետեւանքով հայկական կողմն ունի 207 զոհ եւ անհետ կորած, 293 վիրավոր, 20 գերեզմանով զինծառայող: Վիրավորներից յոթը քաղաքացիական անձինք են: Զոհվել է նաեւ քաղաքացիական երեք անձ, քաղաքացիական երկու անձի գտնվելու վայրը անհայտ է: Հարձակման հետեւանքով վնասվել է 192 տուն, դրանցից 60-ն ամբողջությամբ են ավերվել:

Սեպտեմբերի 17-ին աղբեջանական կողմը եւս 32 զինծառայողի մարմին էր փոխանցել հայկական կողմին, իսկ սեպտեմբերի 20-ին եւս՝ 95 մարմին:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ՃՏՊ. 28 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵՆ

Հասարակության եւ լրատվամիջոցների առջեւ թափանցիկ լինելու խոստում տված իշխանությունները շարունակում են չկատարել դրանք...

Սակայն այս ընթացքում քիչ թվով պատգամավորներն են պատասխանել մեր հարցմանը: Այսպիսով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից հարցմանը պատասխանել է 5 պատգամավոր, այսինքն՝ 71 պատգամավորներից ընդամենը 14.2 տոկոսը: Պատասխանել են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, պատգամավորներ հասցատուր Քոչոբեյանը, Նարեկ Գրիգորյանը, Գեորգ Պապոյանն ու Արմեն Խաչատրյանը: Նրանք բոլորը նշել են, որ հանգստի չեն մեկնել, հետևաբար գումար չեն ծախսել: Իսկ ահա ԱԺ նախագահի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանը մեզ փոխանցեց, թե նման տեղեկատվությունը գաղտնի է եւ հրապարակման ոչ ենթակա: «Հայաստան» խմբակցությունից մեր հարցմանը պատասխանել է 6 պատգամավոր, այսինքն՝ 29 պատգամավորներից 4.8 տոկոսը՝ Սեյրան Օհանյան, Իշխան Սաղաթեյան, Արթուր Խաչատրյան, Արեգնազ Մանուկյան, Լիլիթ Գալստյան եւ Արմեն Գեորգյան: Նրանք եւս հանգստի չեն մեկնել: Իսկ ահա Պատիվ ունեմ խմբակցությունից հարցմանը պատասխանել են թվով ավելի շատ. Տարոն Մարգարյան, Թագուհի Թովմասյան, Տիգրան Աբրահամյան, Մարտուն Գրիգորյան:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԱԼՐՈՒՄ ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՎ

Արտակարգ իրավիճակների նախարարության մարզային փրկարարական վեց վարչություն համալրվել է «UAZ Patriot» մակնիշի նոր ավտոմեքենաներով: Արտակարգ իրավիճակների տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից հայտնում են, որ փրկարարամիջոցները ձեռք են բերվել կառավարության կողմից 2022 թվականի հուլիսին ԱԻՆ-ին տրամադրած 1,2 միլիարդ դրամից առանձնացված գումարով: Հատկացման մի մասը տրամադրվել է գերատեսչության տարբեր ստորաբաժանումների շենք-շինությունների բարելավման, վերանորոգման եւ հիմնանորոգման նպատակով: Ընդհանուր առմամբ գնվելու է «UAZ Patriot» մակնիշի 19 նոր ավտոմեքենա՝ 8 սովորական, 11-ի փիքափ թափով: Ձեռք բերված 8 ավտոմեքենաներից 6-ը բաշխվել են Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի, Կոտայքի, Լոռու եւ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունների միջև: Ավտոմեքենաները վարչության պետերին հանձնվել են ԱԻՆ շարահրապարակում փրկարար ծառայության տնօրենի տեղակալներ Տիգրան Պետրոսյանի եւ Կարապետ Մանուկյանի գլխավորությամբ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԿԻՄԱՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՐԿ

Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը հեղեղված է, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը դրված է հանրային քննարկման Արցախի Հանրապետության իրավական հանձնաժողովում:



«Այսպես, Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մալու դեպքում, մինչեւ նորընտիր Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը, արգելվում է արձակել Ազգային ժողովը, նշանակել հանրաքվե, նշանակել կամ ազատել Կառավարության անդամներին, զինված ուժերի եւ այլ զորքերի բարձրագույն իրամասնատարական կազմը: Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, հաշվի առնելով Հանրապետության նախագահի եւ Ազգային ժողովի կողմից լիազորությունների միաժամանակյա ստանձնումը, նախատեսված է Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մալու դեպքում Հանրապետության նախագահի հրաժարականի, մահվան, լիազորությունների դադարեցման կամ նրան անվստահություն հայտնելու, պաշտոնակալ անելու) Հանրապետության նախագահի եւ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ նշանակելու պահանջը: Նույն մեխանիզմը գործում է նաեւ Ազգային ժողովի արձակման դեպքում: Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված իրավական ընթացակարգերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մինչեւ արտահերթ ընտրությունների անցկացումը եւ ընտրությունների արդյունքներով գործադիր իշխանության ղեկավար ու խորհրդարան կազմավորելը, պետության կառավարման համակարգը լիարժեք չի գործում, գործադիր իշխանությունը Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մալու դեպքում «կաթվածահար է» լինում, պարարտ հող է նախապատրաստվում սահմանադրական ճգնաժամերի համար», - ասված է նախագծում:

Արցախի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը առաջարկում է վերափոխել կառավարման համակարգը՝ անցում կատարելով կառավարման կիսանախագահական համակարգին:

«Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հանրապետության նախագահն իր ամբողջ պաշտոնավարման ընթացքում գործադիր իշխանության համար կրում է անհատական պատասխանատվություն: Գործադիր իշխանությունն իրականացվում է մեկ կենտրոնի՝ Հանրապետության նախագահի կողմից: Հանդիսանալով Արցախի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության եւ անվտանգության երաշխավոր՝ նրա ձեռքում է կենտրոնացած ամբողջ գործադիր իշխանությունը: Նա է զինված ուժերի գերագույն գլխավոր իրամասնատարը, Անվտանգության խորհրդի նախագահը, նա է ղեկավարում պետության ներքին եւ արտաքին քաղաքականությունը, իրականացնում պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը:

Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ներկայիս պայմաններում բավականին վտանգավոր եւ չափազանց ռիսկային է իշխանության գերկենտրոնացումը մեկ անձի՝ Հանրապետության Նախագահի ձեռքում», - նշված է նախագծում:

Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը գտնում է, որ Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մալու դեպքում կարող է առաջանալ իրավաքաղաքական ճգնաժամի վտանգ:

ԵՐԿՔԱՂՎՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Արցախի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը առաջարկում է երկխոսության (կրկնակի բաղադրությամբ) հեռու կառավարման մեխանիզմները կանոնակարգել սահմանադրական մակարդակով:

«Պետք է նշենք, որ ոչ 2006 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, ոչ էլ 2017 թվականի Արցախի Հանրապետության Սահմանադրություններով անդրադարձ չի կատարվել երկխոսությանը (կրկնակի քաղաքացիությանը): Ընդ որում, Սահմանադրությամբ նախատեսված չլինելը երկքաղաքացիությունն (կրկնակի քաղաքացիություն) Արցախի Հանրապետությունում բացառելու հիմք չեն: Այդ մասին են վկայում կազմավորման պահից ի վեր Արցախի Հանրապետությունում ընդունված իրավական ակտերը, որոնցով մանրամասնվել են երկքաղաքացիության (կրկնակի քաղաքացիության) հետ կապված հարաբերությունները: Այսպես, դեռեւս 1992 թվականի հունվարի 6-

ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին» հռչակագրով սահմանվեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թույլատրվում է երկակի քաղաքացիություն: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հիմունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանվեց, որ կրկնակի քաղաքացիության ձեռքբերման կարգը եւ հիմքը կարգավորվում է այլ պետությունների հետ պայմանագրերով: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով էլ կարգավորվեցին կրկնակի քաղաքացիության հետ կապված հարաբերությունները, մասնավորապես, սահմանվեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացին կարող է միաժամանակ հանդիսանալ այլ պետության /այլ պետությունների/ քաղաքացի կամ օտարահպատակ եւ կատարել այլ պետության /այլ պետությունների/ քաղաքացու

ցած մարտահրավերները, ինչպես նաեւ ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում, արտակարգ իրավիճակներում պետական կառավարման համակարգի ճկունությունն ապահովելու նպատակով՝ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը առաջարկում է վերափոխել կառավարման համակարգը՝ անցում կատարելով կառավարման կիսանախագահական համակարգին:

Առաջարկվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ անդրադառնալ Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակին, մասնավորապես, վերանայել Անվտանգության խորհրդի խորհրդակցական բնույթը, սահմանել Անվտանգության խորհրդի գործունեության հիմնական նպատակները, լիազորությունները, ինչպես նաեւ ամրագրել, որ Անվտանգության խորհրդի կազմավորման եւ գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

Կառավարման կիսանախագահական համակարգի դեպքում, խորհրդարանը մասնակցում է կառավարության ձեւավորմանը, մասնավորապես, կառավարության կառուցվածքը, կառավարության առաջարկությամբ, սահմանվում է օրենքով: Գործող Սահմանադրությամբ, որպես խորհրդարանի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության արդյունավետ միջոց, ամրագրված է հարցապահման ինստիտուտը, որն իրականացվում է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից:

«Ի լրումն գործող իրավակարգավորումների՝ առաջարկվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանել, որ հարցապահման արդյունքով Ազգային ժողովը Հանրապետության նախագահին կարող է առաջարկել քննարկել կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը: Պետք է նշենք, որ կառավարման կիսանախագահական համակարգին անցում կատարելու արդյունքում անհրաժեշտ է լինելու վերանայել ինչպես Հանրապետության նախագահի, այնպես էլ՝ Ազգային ժողովի եւ կառավարության լիազորությունները՝ ապահովելով իշխանության բոլոր ճյուղերի արդյունավետ գործունեությունը», - նշված է նախագծում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:



12 ՀԱՄԵՐԳ

# ՄՏԱՄԲՈՒՅՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԳԵՂՈՆԻ ՓԱՌԱՏՈՆ

**Կոմիտասի 153-ամյակին նվիրված համերգով սեղանների 26-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության սանդ կսրվի Վահագն Մամբուլյանի անվան երգեհոնի միջազգային փառասոնի մեկնարկը:**

Փառատոնն անցկացվելու է մինչև նոյեմբերի 6-ը: Փառատոնային օրերին կկազմակերպվի 12 համերգ, որոնք տեղի կունենան Երեւանում, Կապանում եւ Չարենցավանում:

Փառատոնին կմասնակցեն հայտնի երգեհոնահարներ Ֆաբիո Մաչեռան (Իտալիա), Եվգենի Ավրամենկոն (Ռուսաստան), Ժան-Պիեռ Սթայվերը (Նիդեռլանդներ), Լադա Լաբզինան (Ռուսաստան), Էմմա-Նուել Առաքելյանը (Ֆրանսիա): Երգեհոնահարները կանցկացնեն նաեւ վարպետության դասեր:

Հայկական երգեհոնային դպրոցը կներկայացնեն Աննա Բակունցը, Կարինե Հովհաննիսյանը, Հարություն Թազվորյանը, Թերեզա Ոսկանյանը, Հովհաննես Մանուկյանը, Արմեն Աղաջանյանը, Դավիթ Հովհաննիսյանը, Լուսին Սառաջյանը, Լուսինե Հարությունյանը, Վահագն Մարգարյանն ու Մարինա Նահապետյանը:

«Երգեհոնն իր առանձնահատուկ տեղն ու լսարանն ունի հայաստանյան մշակութային կյանքում: Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան հոլանդական «Ֆլեյտորոպ» երգեհոնը տեղադրվել է 1979 թվականին եւ եզակի է իր տեսակի մեջ նախկին ԽՍՀՄ տարածքում: Հաշվի առնելով գործիքի եզակիությունն ու երգեհոնային երաժշտության նկատմամբ մեր ունկնդրի հետաքրքրությունը՝ գաղափար հղացավ կազմակերպելու նման մասշտաբային փառատոն: Գաղափարը մի քանի տարվա պատմություն ունի, համավարակը եւ պատերազմը ստիպեցին փոքր-ինչ հետաձգել իրականացումը, սակայն ուրախ ենք, որ այս համերգաշրջանում հանդիսատեսին կներկայացնենք Վահագն Մամբուլյանի անվան երգեհոնի միջազգային փառատոնը: Ստամբուլյանը



ելույթ է ունեցել Կամերային երաժշտության տանը կայացած առաջին երգեհոնային երաժշտության համերգին»,-նշում է փառատոնի նախաձեռնող, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի փոխտնօրեն Արմեն Սուքիասյանը:

Փառատոնի ընթացքում կհնչեն ինչպես դասական երգեհոնային ստեղծագործություններ, այնպես էլ հայկական երաժշտական գոհարների երգեհոնային մշակումներ եւ հայ հեղինակների երգեհոնային ստեղծագործություններ: Փառատոնի ծրագրում ներառված է նաեւ Միքայել Թարիվերդիեւին նվիրված համերգ:

## «ՀՐԱՇՆԱԳՈՐԾ»

# ԴՐԱՄԱՅԻ ՀԻՄՔՈՒՄ ԿՈՒՅՐ ԵՎ ԽՈՒՂ ԳՐՈՂ

**Չյումրու Վ. Աճեմյանի անվան դեսպանական դրամատիկական թատրոնը եւ Սոս Մարգարյանի անվան «Համազգային» թատրոնը ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ սեղանների 24-ին եւ 25-ին Չյումրու դրամատիկական թատրոնում կներկայացնեն «Հրաշագործը» բեմադրությունը:**

Բեմադրության հեղինակը ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Նիկոլայ Ծատուրյանն է, բեմանկարչությունը՝ Գ. Եվանգուլյանի, երաժշտական ձեւավորումը՝ Հ. Իսրայելյանի, ղեկավարը՝ Լ. Խաչատրյանի:

Ներկայացման մեջ զբաղված են ՀՀ վաստակավոր արտիստ Նարինե Գրիգորյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Տիգրան Գաբրիելյանը, Անգելինա Զաքարյանը, Արփինե Մխիթարյանը, Տաթև Դազարյանը, Սեդա Սկրտչյանը, Սարգիս Դարիբյանը, Ֆրունզիկ Ամիրխանյանը:

Ուիլյամ Գիբսոնի «Հրաշագործ» դրամայի հիմքում կույր եւ խուլ գրող, ամերիկացի հասարակական գործիչ Հելեն Բելլերի մանկության պատմությունն է,



որն իր ուսուցչուհու՝ Էննի Սուլիվենի շնորհիվ կարողանում է հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ:

Ներկայացման մեջ հնչեցված համամարդկային խնդիրներն այսօր հասարակության համար առաջնային հարցեր են, որոնց պատասխաններն ու դեղատոմսը կարելի է գտնել «Հրաշագործ» հոգեբանական դրամայում:

## ԼՈՒՐԵՐ

### 55-ԱՄՅԱԿ

Երեկ վաստակավոր արտիստուհի, երգչուհի, ԱԺ Նախկին պատգամավոր Շուշան Պետրոսյանը նշում է ծննդյան 55-ամյակը: Երգչուհին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց, որ որեւէ բան նշելու տրամադրություն եւ ցանկություն չունի:

«Տրամադրությունս չլքել առաջնագիծը, լինել միշտ առաջնագծում, անդամաճան, հանուն հայրենիքի, հանուն մեր զավակների, նոր ծնվող երեխաների լուսավոր ապագայի, անկախ Հայաստանում ապրելու, վերականգնելու արժանապատվությունը ու հաղթանակների խորհուրդը», -անդրադառնալով իր երազանքին՝ նշեց երգչուհին: Երգչուհին գիտակցում է, որ ճանապարհը հեշտ չի լինելու, պետք է շատ դժվարություններ հաղթարել, բայց անկոտրում է, այլ տարբերակ չկա: Ըստ նրա՝ պետք է փառքով եւ արժանատվությամբ հաղթահարենք: Հիշեցնենք, որ Շուշան Պետրոսյանը հայաստանյան էստրադային երգարվեստի ոլորտում բավականին հայտնի երգչուհի է: Նա մասնակցել է Հայաստանում եւ արտասահմանում հայկական սփյուռքի ներկայացուցիչների համար կազմակերպված համերգների, հանդես է եկել մենահամերգներով: Հատկապես հայտնի է նրա երգած «Երազ իմ երկիր Հայաստան» եւ «Սպարապետ» երգերը: Վերջին երգը երգչուհին նվիրել է Վազգեն Սարգսյանին:

ԼԻՂԱ ԵՐԻԱԶՈՐՅԱՆ

### ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ 11 ՏԱՐԻՆԵՐ

Իտալական «Ռոմայի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն պատասխանել է հարցին, թե ինչ է փոխվել Ա Սերիայում իր բացակայության 11 տարիներին:

«Իմ հեռանալուց հետո Ա Սերիայի որակն ընկել է նախորդ 10 տարում, առաջնությունը դարձել է քիչ գրավիչ երկրից դուրս: Բայց վերադարձից հետո այստեղ գտա մրցունակ լիգա, որը համարում են ամենաբարձր մակարդակի խաղացողներ:

Դեռ կա տարբերությունը առաջատար ակումբների եւ մյուսների միջեւ, բայց ամեն դեպքում մյուս թիմերն էլ զարգացել են:

### ՈՒԵՖԱ-ՈՒՄ ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության եզրափակիչ մրցաշարի մասնակից հավաքականների թիվը 24-ից 32 դարձնելու գաղափարը զարգացում չի ունենա ՈւԵՖԱ-ում:

2016 թվականից Եվրոպայի առաջնության եզրափակիչ մրցաշարին մասնակցում է 24 հավաքական: Դրանից առաջ մասնակցում էր 16: ՈւԵՖԱ-ն դիտարկում էր 2028 թվականից եւս 8 թիմով ավելացնել մասնակիցների թիվը, սակայն Եվրոպական հեռուստատեսարժակողները ՈւԵՖԱ-ի աշխատանքային խմբին հայտնել են, որ այդ քանակի թիմերի մասնակցությամբ մրցաշարի հանդիպումների մեծ մասը առևտրային արժեք չի ունենա, արդյունքների մեծ մասը կլինի կանխատեսելի:

Վերջնական որոշումը ՈւԵՖԱ-ն կընդունի նոյեմբերին անցկացվելիք Գործադիր կոմիտեի նիստում:

● **Սեպտեմբերի 26-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա Երգեհոնի միջազգային փառատոնի բացման համերգ: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ 19:00:**



Էջը՝ ՆԱԻՐԻԱ ԳՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ իմանալ կենսաթոշակ նշանակելու ընթացակարգը ինչպե՞ս է կատարվում:
Գայանե Ամիրխանյան (43 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակը կենսաթոշակի իրավունք ունեցող անձի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա՝ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի իրավունք ունեցող անձի հաշվառման հասցեի մասին տվյալների, բացառությամբ ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի: Կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացնում է անձամբ, բացառությամբ սույն օրենքի 36-րդ հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքի:

Կենսաթոշակի իրավունք ունեցող՝ տասնչորս տարին լրացած անձը կարող է կենսաթոշակ նշանակելու դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել անձամբ, բացառությամբ սույն օրենքի 36-րդ հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքի:

Ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը նշանակելու, առաջին խմբի հաշմանդամին եւ հոգեբուժական հաստատությունում բուժվող անձին կենսաթոշակ նշանակելու կարգը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր է համարվում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում դիմում ներկայացնելու օրը: Դիմումին կցվում են օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

ԿՎՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը
Դալիթա Դավթյան (22 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

1) յուրաքանչյուր երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի համար՝ մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումը ունեցող եւ 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 60 տոկոսի չափով:

2) երկու ծնողին կորցրած մինչեւ 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի համար՝ մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումը եւ 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 80 տոկոսի չափով:

3) ընտանիքի՝ սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր մյուս անդամի համար՝ մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումը եւ 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 40 տոկոսի չափով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի (այդ թվում՝ երկու ծնողին կորցրած երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի) կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը սահմանում է Կառավարությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Մայրաքաղաքում տրանսպորտային հոսքերի անցանելիությունն ավելացնելու նպատակով սեպտեմբերի 25-ից երթուղիների կազմակերպման փոփոխություն կկատարվի Արտաշիսյան-Շիրակ փողոցների խաչմերուկում

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone number, and a checkbox for 'անվճար' (free of charge). Includes contact information for the newspaper.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 23.09.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶԵՆՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: